ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- _____ 2009 թվականի № --Ա

քաղ. Երևան

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի №345Ն որոշմամբ հաստատված «Այլ լիցենզավորված անձանց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով ելքային ձայնային ծառայությունների մատուցման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 1.6 կետը, որի համաձայն՝ կոնկրետ դիմումը բավարարելու համար լրացուցիչ ժամկետն արդարացնող հատուկ կառուցման աշխատանքների անհրաժեշտության դեպքում օպերատորը, դիմումն ստանալու պահից 15-օրյա ժամկետում, դիմումը և հատուկ կառուցման աշխատանքների իրականացման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումները պարտավոր է ներկայացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով և այդ մասին գրավոր տեղեկացնել ծառայություններ մատուցողին,

բ) «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Օպերատոր) օպերատոր լինելը,

գ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի մարտի 13-ի №ՌՆ-477Հ գրությունը, որի համաձայն Օպերատորի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ Կարգի պահանջների կատարման ուսումնասիրության նպատակով,

դ) Օպերատորի 2009 թվականի մարտի 25-ի №129/09 գրությունը, որով տեղեկատվություն է ներկայացվել «Գլոբալ Քոլլայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համարների գործարկման վերաբերյալ,

ե) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի կողմից Օպերատորի 2009 թվականի մարտի 25-ի

№129/09 գրությամբ ներկայացված տեղեկատվության ուսումնասիրությունը, որի արդյունքում արձանագրվել է, որ 2008 թվականի մարտի 6-ին և մայիսի 12-ին «Գլոբալ Քոլլայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը համարների գործարկման խնդրանքով դիմել է Օպերատորին՝ սակայն վերջինս, խախտելով Կարգի 1.6 կետը, 2008 թվականի օգոստոսի 16-ի N476/08 պատասխան գրությամբ պատճառաբանել է, որ դիմումը կվերանայվի ցանցային կայանային մոդեմային համակարգի ընդլայնման աշխատանքների ավարտից հետո՝ 2009 թվականի վերջին, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ժբ) ենթակետը, 6-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին կետը, 54-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, 61-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 63-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «Այլ լիցենզավորված անձանց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով ելքային ձայնային ծառայությունների մատուցման կարգը հաստատելու մասին» №345Ն որոշմամբ հաստատված Կարգի 1.6 կետի խախտման համար «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը ենթարկել՝
1) տույժի՝ 2 000 000 (երկու միլիոն) դրամ գումարի չափով,
2) լրացուցիչ տույժի՝ 2 000 000 (երկու միլիոն) դրամ գումարի չափով:

2. Մինչև «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2008 թվականի օգոստոսի 16-ի N476/08 գրությամբ նշված հեռախոսացանցի վերազինման աշխատանքների ավարտը՝ 2010 թվականի հունվարի 1-ը, ազատել «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը Երևան քաղաքի Տիգրան Մեծի 4 հասցեում 3 ISDN PRA E-1 կապուղով համարների գործարկման պարտականությունից:

3. «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը՝
1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գումարները փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե և փոխանցումը հավաստող փաստաթղթի պատճենը ներկայացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով,
2) ընդունել ի գիտություն, որ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությունն իրավասու է՝

ա. սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու սույն որոշումը,

բ. սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱՋԱՐՅԱՆ

ք. Երևան
-- հունիսի 2009թ.
ժամը 16^{00}